ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Նարինե Կարլենի Գրիգորյան, Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի տնօրենի պարտականությունները կատարող

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   ԱՄՆ, Լոս Անջելես, 2026թ. ապրիլի 2-ից 20-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   Լոս Անջելեսի «Համազգային» կրթամշակութային միություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Գործուղման նպատակն էր կազմակերպել և իրականացնել Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի հյուրախաղերը ԱՄՆ-ում, ներկայացնել ժամանակակից հայկական թատերարվեստը ամերիկահայ և միջազգային հանդիսատեսին, ինչպես նաև խթանել մշակութային կապերի զարգացումը և ամրապնդել Հայաստան-Սփյուռք համագործակցությունը:

5. **Քննարկված թեմաները.**

   - Հայկական թատերարվեստի ներկայացումը սփյուռքում
   - Մշակութային համագործակցության զարգացման հեռանկարները
   - Համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները
   - Թատրոնի միջազգային գործունեության ընդլայնումը

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հյուրախաղերի շրջանակում կայացել են հանդիպումներ Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչների, մշակութային կազմակերպությունների ղեկավարների և հանդիսատեսի հետ: Բացմանը հնչել է ողջույնի խոսք՝ ընդգծելով

հայկական ժամանակակից արվեստի կարևորությունը միջազգային մշակութային դաշտում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության շարունակականության վերաբերյալ: Պաշտոնական փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվում է շարունակել և ընդլայնել համագործակցությունը սփյուռքի մշակութային կազմակերպությունների հետ՝ պարբերական հյուրախաղերի և համատեղ նախագծերի միջոցով:

Տնօրենի պ/կ՝ **Ն. Գրիգորյան**

23.04.2026թ.